# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 12 » հուլիսի 2019 թվականի N: 111 ք.Գյումրի

## ՍԱՄՎԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Սամվել Ավետիսյանի 2019 թվականի հուլիսի 10-ի դիմումը.

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սամվել Ավետիսյանին տրամադրել 25 աշխատանքային օր ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2019 թվականի հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 29-ը ներառյալ:
2. Սամվել Ավետիսյանի՝ արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Աշոցքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Մարգարիտ Դանիելյանին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է